ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/08, 19.01.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Խաչպար» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/8» գնանշման հարցում

Գնման առարկան՝ լաբորատոր ազդանյութերի և պարագաների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/8» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու համապատասխան որոշում՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԲՈՂՈՔ

1) **Բողոք բերող անձ՝** <<Խաչպար>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ռաֆֆու 33/7
2) **Պատվիրատուի անվանումը՝** ՀՀ ՊՆ
Հասցե՝ ք. Երևան, Բագրևանդի 5

3) **Գնանշման հարցման ծածկագիրը՝** « ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/8»
և առարկան՝ <<Լաբորատոր ազդանյութերի և պարագաների ձեռքբերում>>

4) **Վեճի առարկան և բողոք ներկայացնող անձի պահանջը՝**

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊՆ-ն <<Լաբորատոր ազդանյութերի և պարագաների>> ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/8>> ծածկագրով գնանշման հարցման մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2022 թ. հունվարի 13-ի թիվ 1 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1), որի Հրավերի թվով 62 չափաբաժիններով պահանջվում են տարբեր տեսակի լաբոատոր ազդանյութեր և պարագաներ (կից փաստաթուղթ թիվ 2):

Հրավերի <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ>> Հավելված թիվ 1-ի աղյուսակից հետո Պատվիրատուի կողմից գրված <<Ծանոթություն>>-ով պահանջվող բոլոր ապրանքների համար սահմանված են մի քանի լրացուցիչ պահանջներ, որոնցից թիվ 1-ում առկա է նաև Հրավերով պահանջվող բոլոր ապրանքներին վերաբերվող հետևյալ պահանջը՝

<<Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլն): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:>> (կից փաստաթուղթ թիվ 3):

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊՆ-ի <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/8>> մրցույթով պահանջվող ապրանքները ՀՀ տարածք ներմուծելու և ՀՀ տարածքում վաճառելու համար ՀՀ Օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված նման պահանջ, ինչպես նաև այդ ապրանքների գրանցման համար սահմանված նորմեր առայժմ գոյություն չունեն, ինչը նշանակում է, որ Պատվիրատուի այդ պահանջը ոչ միայն չի համապատասխանում ՀՀ Օրենսդրությանը, այլև այդ պահանջը դառնում է խտրական, քանի որ սահմանափակում է տարբեր երկրների արտադրողների նմանատիպ ապրանքների ներմուծմամբ և ՀՀ տարածքում դրանց վաճառքը իրականացնող <<Խաչպար>> ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը տվյալ մրցույթին, դրանով իսկ արգելք է հանդիսանում <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 7-րդ հոդվածի պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ <<Խաչպար>> ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը:

Պատվիրատուի կողմից ՀՀ Օրենսդրությանը և իրավական այլ ակտերին չհամապատասխանող այդ խտրական պահանջը նաև անհիմն կերպով բարդացնում է <<Խաչպար>> ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/8>> ծածկագրով գնման գործընթացին՝ հակասելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին:

Պատվիրատուի կողմից վերոգրյալ պահանջի ներառումը հանգեցնում է գնման գործընթացի ոչ միասնական կանոններով, ոչ մրցակցային, ինչպես նաև խտրական հիմունքներով կազմակերպմանը <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար՝ դրանով իսկ հակասելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված սկզբունքներին:

<<Խաչպար>> ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ ՀՀ ՊՆ-ի <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/8>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2022թ. հունվարի 13-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ <<Լաբորատոր ազդանյութերի և պարագաների>> ձեռքբերման նպատակով հայտարարված <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/8>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերի ընթացակարգը, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի ՀՀ ՊՆ-ի <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/8>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու համապատասխան որոշում՝ <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/8>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

Վերոգրյալ փաստերը, ներկայացված փաստաթղթերը ապացուցում են, որ ՀՀ ՊՆ-ի <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/8>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերի <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ>> Հավելված թիվ 1-ի աղյուսակից հետո Պատվիրատուի կողմից ձեռք բերվող ապրանքների համար սահմանված՝ <<**Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլն): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:**>> պահանջը՝

ա) խտրական է և արգելք է հանդիսանում <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու իր օրենսդրական սկզբունքը՝ դրանով իսկ հակասելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 7-րդ հոդվածի սահմանումներին;

բ) անհիմն կերպով բարդացնում է <<Խաչպար>> ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին՝ դրանով իսկ հակասելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին;

գ) հանգեցնում է գնման գործընթացի ոչ միասնական կանոններով, ոչ մրցակցային, ինչպես նաև խտրական հիմունքներով կազմակերպմանը <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար՝ դրանով իսկ հակասելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված սկզբունքներին:

6) Կից ներկայացնում եմ բողոքարկման վճարի անդորրագիրը:

Առդիր՝ 3 թերթ

<<Խաչպար>> ՍՊԸ տնօրեն՝ Սաթաթ Բալասանյան

19 հունվարի 2022թ.

E-mail: khachpar.llc@gmail.com

Հեռախոս՝ 091-45-90-45

<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, հ/հ 2050922055871001